09.10.2019 թ.
Ժամը 11:30

<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
թիվ՝ 3
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն

<ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-19/35> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովիանդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
/օպերատոր/ Օ. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

1. Հայտերի բացման նիստի վերսկսման վերաբերյալ

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Գասպարյան

1. Կազմակերպված բանակցությունների մասին՝

1.1 Կազմակերպված բանակցությունների շրջանակներում Աիդա Թրեյդ ՍՊԸ-ն և Վիոլա ՍՊԸ-ն առաջարկեց պայմանագրերը կատարել հետևյալ գներով՝

չ/հ	ապրանքի			մասնակից անվանումը և առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ)		
	անվանումը	չ/մ	քանակը	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ	Վիոլա ՍՊԸ	ԱԱՀ
1	1. ԷԿԳ ժապավեն 50Х30	հատ	500	119583,33	117500	առանց աահ
				23916,67	23500	աահ
				143500	141000	ընդհանուր
2	2.մեխանիկական տոնոմետր	հատ	100	229166,66		առանց աահ
				45833,34		աահ
				275000		ընդհանուր
5	5.օնդանսետրոն (օնդանսետրոնի հիդրոքլորիդի դիհիդրատ)	հատ	5000	1857916,67		առանց աահ
				371583,33		աահ
				2229500		ընդհանուր

1.2 Աիդա Թրեյդ ՍՊԸ-ն սույն գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցությունների ընթացքում 09.10.2019թ.-ին 2-րդ չափաբաժնի համար. <<2.մեխանիկական տոնոմետր>> ներկայացրել է գնի նվազեցման առաջարկ, որտեղ առանձնացված տողով նախատեսել է ավելացված արժեքի հարկի գծով վճարվելիք գումար: Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և սույն գնման ընթացակարգի հրավերի 8.2 կետի դրույթներով ու հաշվի առնելով այն, որ մեխանիկական տոնոմետրը հանդիսանալով արյան ճնշումը չափիչ սարք դասվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018 խմբին, գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ներքոնշյալ պատճառաբանությամբ մերժել Աիդա Թրեյդ ՍՊԸ-ի բանակցությունների շրջանակներում 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկը:

ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-19/35 ծածկագրով բաց մրցույթի Հրավերի 5.2 կետի համաձայն Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով և **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:**

Մեխանիկական տոնոմետրը հանդիսանում է արյան ճնշումը չափոխ սարք, այդ իսկ պատճառով այն դասվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018 խմբին: Համաձայն՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 05-ի N 1317-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված թիվ 3 հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի, դասակարգչի 9018 խմբին դասվող ապրանքների օտարումը ազատված է ԱԱՀ-ից: Հետևաբար Մասնակիցը 2-րդ չափաբաժնում ներառված գնման առարկայի համար ներկայացրած գնային առաջարկում ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը պետք է չնշեր, քանի որ ըստ վերը նշված N 1317-Ն որոշման արյան ճնշումը չափոխ սարքերի օտարումը, ազատված է ԱԱՀ-ից:

Վերը նշվածից հետևում է, որ բանակցությունների շրջանակներում Աիդա Թրեյդ ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում գնման ընթացակարգի հրավերի պահանջներին և, այդ իսկ պատճառով ենթակա է մերժման: Ընդ որում, գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Աիդա Թրեյդ ՍՊԸ-ի 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած գնի առաջարկում ԱԱՀ-ի գծով գումար նախատեսված չի եղել:

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով

2. <u>Գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մսնակիցների մասին</u>

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների գնային առաջարկները և հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցներին,

կողմ ***5 (հինգ)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով որոշեց՝

գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել

1	Եվրոֆարմ ՍՊԸ-ին	8-րդ, 17-րդ, 19-րդ և 28-րդ չափաբաժինների մասով
2	ՎԻՈԼԱ ՍՊԸ-ին	1-ին չափաբաժնի մասով
3	Նատալի ֆարմ ՍՊԸ-ին	2-րդ, 3-րդ, 6-րդ, 9-րդ, 15-րդ, 16-րդ, 25-րդ, 27-րդ, 29-րդ և 31-րդ չափաբաժինների մասով
5	Ֆարմ Թրաստ ՍՊԸ-ին	20-րդ չափաբաժնի մասով
7	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ին	5-րդ և 30-րդ չափաբաժինների մասով

գնման ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել

3	Նատալի ֆարմ ՍՊԸ-ին	5-րդ և 30-րդ չափաբաժինների մասով
6	ԼԵՅԿՈ ՍՊԸ-ին	2-րդ, 3-րդ և 31-րդ չափաբաժինների մասով
7	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ին	1-ին չափաբաժնի մասով

գնման ընթացակարգի երրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել

4	Ֆարմեգուս ՍՊԸ-ին	1-ին չափաբաժնի մասով
7	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ ՍՊԸ-ին	2-րդ չափաբաժնի մասով

3. <u>Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին</u>

3.1 Գնման ընթացակարգի հրավերով սահմանված Մասնակիցների որակավորման չափանիշների գնահատման արդյունքների հրապարակման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետներում: Գնահատող հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել՝

- Համաձայն Կարգի 43-րդ կետի դրույթներին կատարել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ
- Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը):

Ընդունել որոշում կողմ ***5 (հինգ)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով

գնահատող հանձնաժողովի նախագահ
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
հանձնաժողովիանդամներ
/դեղագետ/ Մ. Թովմասյան

/դեղագործ/ Ս. Անանյան

/հաշվապահ/ Ն. Դավթյան

/օպերատոր/ Օ. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան